ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 12.02.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի
թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/07

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը՝ (այսուհետ՝ նաև Խորհուրդ) քննելով «Երևանի կանխարգելիչ ախտահանում» ՓԲԸ-ի 22.01.2018թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից նյութերը, պարզեց հետևյալը.

1. **<u>«Երևանի կանխարգելիչ ախտահանում» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>**

«Երևանի կանխարգելիչ ախտահանում» ՓԲԸ-ն (այսուհետ՝ նաև Ընկերություն) ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին 22.01.2018թ. ներկայացրել է բողոք, որով հայտնել է հետևյալը.

«Գործի նախապատմությունը և փաստերը.

Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից հայտարարված ԵՔ-ԲՄԾՁԲ-18/31 ծածկագրով բաց մրցույթին մասնակցության հայտ են ներկայացրել Բողոքաբերը, «Լամեքս» ՍՊԸ-ն, «ԵրՄիք» ՍՊԸ-ն և «Դավ-Հակ» ՍՊԸ-ն:

Գնահատող հանձնաժողովի 18.01.2018թ. թիվ 2 արձանագրության 2-րդ կետի համաձայն՝ բոլոր մասնակիցների հայտերը գնահատվել են սահմանված պայմաններին համապատասխան:

Թիվ 2 արձանագրության 4-րդ կետի համաձայն՝ թիվ ԵՔ-ԲՄԾՁԲ-18/31 ծածկագրով բաց մրցույթին 1-ին, 4-ից 10-րդ և 12-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից

է ճանաչվել «ԵրՄիք» ՍՊԸ-ն, 2-րդ, 11-րդ և 13-րդ չափաբաժինների մասով՝ «Լամեքս» ՍՊԸ-ն, իսկ 3-րդ չափաբաժնի մասով՝ Բողոքաբերը:

Բողոքի իրավական հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Գտնում ենք, որ գնահատող հանձնաժողովի 18.01.2018թ. թիվ 2 արձանագրությունը կազմված է «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք), ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում), և թիվ ԵՔ-ԲՄԾՁԲ-18/31 ծածկագրով բաց մրցույթի հրավերով (այսուհետ՝ Հրավեր) սահմանված պահանջների խախտմամբ, հետևաբար, այն ենթակա է փոփոխման հետևյալ պատճառաբանությամբ.

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Որոշման թիվ 1 Հավելվածի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հրավերով սահմանված է, որ Մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտը ներկայացվող գնի հինգ տոկոսին:

Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով:

Հրավերի Հավելված 8-ով սահմանված է տուժանքի համաձայնագրի ձևը, վճարման պահանջագիրը և դրա լրացման կարգը: Տուժանքի համաձայնագրի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը միասին հանդիսանում են մեկ ամբողջական փաստաթուղթ:

Վճարման պահանջագրի լրացման կարգով սահմանված պարտադիր լրացման վավերապայմանների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ վճարման պահանաջագրի

18.ա. և 18.բ. կետերը հանդիսանում են պարտադիր վավերապայմաններ, որոնց չպահպանումը հանգեցնում է հայտի ապահովման անհամապատասխանությանը հրավերի պահանջներին:

Տվյալ դեպքում բացի Բողոքաբերի կողմից ներկայացված վճարման պահանջագրի, մնացած մասնակիցների կողմից ներկայացված վճարման պահանջագրերում բացակայում է ստորագրությունը և կնիքը, ինչը նախատեսված է հրավերով սահմանված վճարման պահանջագրի 18.ա. և 18.բ. կետերով»:

Ամփոփելով վերոգրյալը և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-ից 48-րդ և 50-րդ հոդվածներով ՝ Ընկերությունը Բողոքով պահանջել է.

1. Պարտավորեցնել գնահատող հանձնաժողովին ընդունել «ԵրՄիք», «Լամեքս» և «Դավ-Հակ» ՍՊԸ-ների հայտերը մերժելու մասին որոշումները:

2.Պարտավորեցնել գնահատող հանձնաժողովին ընդունել «Երևանի կանխարգելիչ ախտահանում» ՓԲԸ-ին 1-ին, 2-րդ, 4-ից 6-րդ, 8-ից 13-րդ չափաբաժիններով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու մասին որոշում:

Ընկերությունը պատշաճ կերպով ծանուցվել է Խորհրդում բողոքի քննության նպատակով կայանալիք նիստերի վերաբերյալ, սակայն չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

2. <u>Երևանի քաղաքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Երևանի քաղաքապետարանը (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 26.01.2018թ. թիվ 02/61-1386 գրությամբ «Երևանի կանխարգելիչ ախտահանում» ՓԲԸ-ի կողմից 22.01.2018թ. Խորհրդին ներկայացված բողոքի վերաբերյալ հայտնել է հետևյալը.

««Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է՝ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

«ԵՔ-ԲՄԾՁԲ-18/31» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը «Երմիք», «Լամեքս» և «Դավ-Հակ» ՍՊ ընկերությունների (այսուհետ՝ Ընկերություններ) հայտերը բավարար գնահատելով և վերջիններիս հաղթող մասնակից ճանաչելով

առաջնորդվել է այն հանգամանքներով, որ Ընկերությունները կատարել են հրավերով սահմանված նվազագույն պահանջները:

Միաժամանակ գտնում ենք, որ Ընկերությունների կողմից ներկայացված հայտերի ապահովումները ներկայացված են հրավերի պահանջներին համապատասխան, քանի որ հայտի ապահովման «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանները և լրացման կարգի» 18բ կետով սահմանված է, որ Վճարողի կնիքը՝ «պարտադիր՝ կնիքի առկայության դեպքում: Ոչ պարտադիր՝ էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատվելու դեպքում: Ընկերություններն իրենց հայտերի ապահովումները հաստատել են էլեկտրոնային թվային ստորագրությամբ»:

Խորհրդի նիստերին մասնակցում էր Պատվիրատուի լիազորված ներկայացուցիչ Արծրուն Վարդանյանը:

3. <u>ԳԲԽ-ԷՍ-2018/07 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Խորհուրդն ուսումնասիրել է «Երևանի կանխարգելիչ ախտահանում» ՓԲԸ-ի կողմից 22.01.2018թ. Խորհրդին ներկայացված բողոքը և կից փաստաթղթերը, «ԵՔ-ԲՄԾՁԲ-18/31» ծածկագրով բաց մրցույթի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ԵՔ-ԲՄԾՁԲ-18/31» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 18.01.2017թ. ժամը 10:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրությունը, «Լամեքս», «ԵրՄիք» և «Դավ-Հակ» ՍՊԸ-ների կողմից ընթացակարգին ներկայացված հայտերի պատճենները, Պատվիրատուի կողմից 26.01.2018թ. թիվ 02/61-1386 գրությամբ Խորհրդին ներկայացված գրավոր դիրքորոշումը.

Երևանի քաղաքապետարանի կարիքների համար կազմակերպվել է «ԵՔ-ԲՄԾՁԲ-18/31» ծածկագրով բաց մրցույթի ձևով հակահամաճարակային (դեռատիզացիոն) ծառայությունների գնման ընթացակարգ (այսուհետ՝ նաև Ընթացակարգ):

Ընթացակարգին, ի թիվս այլ մասնակիցների, մասնակցության հայտեր են ներկայացրել նաև «Լամեքս», «ԵրՄիք», «Դավ-Հակ» ՍՊԸ-ները և «Երևանի կանխարգելիչ ախտահանում» ՓԲԸ-ն:

Հանձնաժողովը 18.01.2017թ. ժամը 10:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության՝

• 2-րդ կետով արձանագրել է, որ վերը նշված մասնակիցների կողմից ներկայացված հայտերը համաատասխանել են «ԵՔ-ԲՄԾՁԲ-18/31» ծածկագրով բաց մրցույթի հրավերի պահանջներին:

• 4-րդ կետով որոշել է Ընթացակարգի 1-ին, 4-ից 10-րդ և 12-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչել «ԵրՄիք» ՍՊԸ-ին, 2-րդ, 11-րդ և 13-րդ չափաբաժինների մասով՝ «Լամեքս» ՍՊԸ-ին, իսկ 3-րդ չափաբաժնի մասով՝ «Երևանի կանխարգելիչ ախտահանում» ՓԲԸ-ին:

«Երևանի կանխարգելիչ ախտահանում» ՓԲԸ-ն Խորհրդին ներկայացրած բողոքով հայտնել է, որ «Լամեքս», «ԵրՄիք» և «Դավ-Հակ» ՍՊԸ-ների կողմից հայտերով ներկայացված տուժանքի մասին համաձայնագրերին կից վճարման պահանջագրերը լրացված են նշված փաստաթղթերի օրինակելի ձևերով հաստատված վավերապայմանների խախտումներով, այն է՝ հայտատուների կողմից չեն պահպանվել վճարման պահանջագրերի 18ա և 18բ կետերով նախատեսված վավերապայմանները:

Բողոքի քննության նպատակով 18.10.2017թ. տեղի ունեցած նիստի ժամանակ Պատվիրատուի ներկայացուցիչը նշեց, որ բողոքաբերի կողմից Բողոքով ներկայացված փաստարկներն անհիմն են, քանի որ «Լամեքս», «ԵրՄիք» և «Դավ-Հակ» ՍՊԸ-ների հայտերով ներկայացված վճարման պահանջագրերը վերջիններիս կողմից սահմանված կարգով հաստատվել են էլեկտրոնային թվային ստորագրությամբ՝ վկայակոչելով Ընթացակարգի հրավերով նախատեսված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանները և լրացման կարգ»-ի 18բ կետը, որը սահմանում է, որ վճարողի կնիքը պարտադիր չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատվելու դեպքում, ինչն էլ Հանձնաժողովի կողմից հիմք է ընդունվել հյատերի գնահատման ժամանակ, հետևաբար հաշվի առնելով վերը նշված հանգամանքը՝ Հանձնաժողովը նշված հայտերը գնահատել է բավարար:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ իրավական ակտերի միջև հակասությունների դեպքում գործում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և նույն օրենքով նախատեսված ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտերը, բացառությամբ նույն հոդվածի յոթերորդ մասով նախատեսված դեպքերի:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 30-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ծրարը և հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմած փաստթղթերն

ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորած անձը (այսուհետ՝ գործակալ):

«Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթն ունի նույն իրավական նշանակությունը, ինչ որ անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, եթե հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը (...):

ՀՀ կառավարության 06.04.2017թ. N 386-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային ձևով գնումների կատարման» կարգի 3-րդ համաձայն՝ էլեկտրոնային ձևով գնումների կատարման դեպքում գործում են գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները՝ հաշվի առնելով նույն կարգով սահմանված առանձնահատկությունները:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով(...):

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

ՀՀ ֆինանսների նախարարի 24.05.2017թ. թիվ 244-Ա հրամանով հաստատվել են բաց մրցույթով էլեկտրոնային եղանակով կազմակերպվող գնումների բազային միավորի հնգապատիկը գերազանցող գնման հայտարարությունների և հրավերների օրինակելի ձևերը: Համաձայն վերը նշված օրինակելի ձևերի՝ բաց մրցույթի հրավերով նախատեսված տուժանքի մասին համաձայնությանը կից ներկայացվող վճարման պահանջագիրը լրացվում է նույն հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի» համաձայն:

«ԵՔ-ԲՄԾՁԲ-18/31» ծածկագրով բաց մրցույթի հրավերի 8-րդ հավելվածով նախատեսված տուժանքի մասին համաձայնությանը կից ներկայացվող վճարման պահանջագրի՝

•18ա կետով սահմանված «վճարողի ստորագրությունը» վավերապայմանի առկայությունը փաստաթղթում պարտադիր է, ընդ որում՝ նշված վավերապայմանի դաշտը չի լրացվում, եթե վճարողի և վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) միջև կնքված պայմանագրով սահմանվել են այն դեպքերը, երբ վճարողը նախապես տալիս է իր համաձայնությունը/լիազորում է ֆինանսական կազմակերպությանը (մասնաճյուղին) կատարել վճարումներ՝ գանձելով այդ գումարը հաշվից: Ընդ որում, վճարողի կողմից չստորագրվելու դեպքում կից ներկայացվում է նաև վճարողի և վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) միջև կնքված համապատասխան պայմանագրի պատճենը:

•18բ կետով սահմանված «վճարողի կնիքը» վավերապայմանի առկայությունը փաստաթղթում պարտադիր է կնիքի առկայության դեպքում, և ոչ պարտադիր՝ փաստաթուղթը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատվելու դեպքում:

Այսպիսով, Խորհուրդն արձանագրում է, որ «Լամեքս», «ԵրՄիք» և «Դավ-Հակ» ՍՊԸ-ների կողմից հայտերով ներկայացված տուժանքի մասին համաձայնագրերին կից վճարման պահանջագրերը ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 12-րդ ենթակետով սահմանված կարգով հաստատվել են ընկերությունների էլեկտրոնային թվային ստորագրություններով:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Հաշվի առնելով, որ «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ էլեկտրոնային ստորագրությամբ պաշտպանված փաստաթուղթն ունի նույն իրավական նշանակությունը, ինչ որ վճարողի 18ա կետով սահմանված ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, ինչպես նաև այն հանգամանքը, որ վճարման պահանջագրի 18բ կետով սահմանված «վճարողի կնիքը» վավերապայմանը փաստաթուղթը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատվելու դեպքում դառնում է ոչ պարտադիր, Խորհուրդը գտնում է,

որ նշված փաստաթղթերը «Լամեքս», «ԵրՄիք» և «Դավ-Հակ» ՍՊԸ-ների կողմից լրացվել են Հրավերի պահանջներին համապատասխան:

Խորհուրդը գտնում է, որ Հանձնաժողովը «Լամեքս», «ԵրՄիք» և «Դավ-Հակ» ՍՊԸ-ների կողմից ներկայացված հայտերը բավարար գնահատելով՝ գործել է իրավաչափ:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Երևանի կանխարգելիչ ախտահանում» ՓԲԸ-ի կողմից 22.01.2018թ. ներկայացրած բողոքը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ